



[220248]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» հունիսի 2017թ.

N 30-ՆԱ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՎ
ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման 16-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման գործընթացը կազմակերպելու, հավաստագրման և հավաստագրումը մերժելու մասին եզրակացություններ տրամադրելու նպատակով ստեղծել հավաստագրման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)։
2. Հաստատել Հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1 հավելվածի։
3. Հաստատել Հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N2 հավելվածի։
4. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավարությանը։



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱԶՄ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

- Ս.Հարությունյան - հանձնաժողովի նախագահ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ)
- Հ.Մուրադյան - հանձնաժողովի անդամ (նախարարության աշխատակազմի վերլուծություն և մոնիթորինգի վարչության պետ)
- Ա.Մինասյան - հանձնաժողովի անդամ (նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ)
- Գ.Գյունաշյան - հանձնաժողովի անդամ (նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ)
- Ա.Պետրոսյան - հանձնաժողովի անդամ (նախարարության աշխատակազմի իրավական ապահովման բաժնի պետ)
- Ա.Գևորգյան - հանձնաժողովի անդամ (նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ-տարեցների հիմնահարցերի բաժնի պետ)
- Կ.Խաչատրյան - հանձնաժողովի քարտուղար (նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ)

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ և
ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՎԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)**

I. Ընհանուր դրույթներ

1. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) և սույն աշխատակարգով:

II. Հանձնաժողովի խնդիրներն ու գործառույթները

2. Հանձնաժողովի գործունեության խնդիրներն են՝
- 1) սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման գործընթացի ապահովումը.
 - 2) հավաստագրման կամ հավաստագրումը մերժելու վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը:
3. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝
- 1) քննության է առնում սոցիալական սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման նպատակով կազմակերպությունների՝ Որոշման հավելվածով հաստատված ձևին համապատասխան ներկայացրած հայտերը և դրանց կից ներկայացվող փաստաթղթերը, ինչպես նաև դրանցում ներառված տեղեկությունների փոփոխման վերաբերյալ լրացուցիչ ներկայացված փաստաթղթերը.
 - 2) ընդունում և նախարարին է ներկայացնում սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման (այդ թվում՝ վերապահումով հավաստագրման) կամ հավաստագրումը մերժելու մասին եզրակացություն.
 - 3) անհրաժեշտության դեպքում, պահանջում է լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն,
 - 4) անհրաժեշտության դեպքում, ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը ստուգելու նպատակով, հանձնաժողովը հայտը և փաստաթղթերը ստանալուց հետո, ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում այցելում է հավաստագրման ենթակա սոցիալական

ծառայություն տրամադրելու գործունեության համար նախատեսված տարածքներ՝ տվյալ գործունեության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ պայմաններին տեղում ծանոթանալու նպատակով.

5) իրականացնում է որոշմամբ և սույն աշխատակարգով սահմանված այլ գործառույթներ:

III. Հանձնաժողովի գործունեության կազմակերպումը

4. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը:

Նախագահը հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի ընդունած եզրակացությունները, հսկողություն է իրականացնում հանձնաժողովի ընդունած եզրակացությունները՝ Որոշմամբ սահմանված ժամկետում նախարարին տրամադրելու նկատմամբ, իրականացնում է Որոշմամբ և սույն աշխատակարգով նախատեսված այլ գործառույթներ:

6. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրա աշխատանքներին (նիստին) մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն կեսը:

7. Հանձնաժողովի նիստում քվեարկություն իրականացվում և որոշումներն ընդունվում են Որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետով սահմանված կարգով:

8. Հանձնաժողովը, սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման (այդ թվում՝ վերապահումով հավաստագրման) կամ հավաստագրումը մերժելու մասին եզրակացությունը ընդունում և նախարարին է ներկայացնում Որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետով սահմանված կարգով:

9. Հանձնաժողովը, սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը վերապահումով հավաստագրելու դեպքում, նախարարին գրավոր տեղեկացնում է՝ հայտատուի կողմից թերությունները վերացնելու պարտավորության մասին Որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետներում:

10. Սույն աշխատակարգի 9-րդ կետում նշված դեպքում, հայտատուի կողմից թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը պարտադիր այցելում է հավաստագրման ենթակա սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար նախատեսված տարածքներ՝ հայտատուի կողմից թերությունների վերացման գործընթացին ու կատարված աշխատանքներին տեղում ծանոթանալու համար և կազմում է այցելության արձանագրություն:

11. Հանձնաժողովի կողմից, սույն աշխատակարգի 9-րդ կետում նշված՝ տեղեկատվությունը և 10-րդ կետով նախատեսված այցելության արձանագրությունը պահվում են հավաստագրված կազմակերպության անհատական գործում:

12. Հանձնաժողովը հավաստագրման եզրակացություն տրամադրում է այն կազմակերպությանը, որը

1) ներկայացրել է Որոշմամբ հաստատված ձևին համապատասխան հայտ և Որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետով նախատեսված փաստաթղթերը.

2) ունի Որոշմամբ սահմանված հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայության համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող.

ա) կոմունալ, սանիտարահիգիենիկ, ինչպես նաև խնամվողների, տարածքի և հակահրդեհային անվտանգության ապահովման անհրաժեշտ պայմաններ (բացառությամբ՝ տնային պայմաններում խնամքի ծառայության).

բ) տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու համար համապատասխան տարածք (բացառությամբ՝ տնային պայմաններում խնամքի ծառայության).

գ) անձնակազմ (համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ).

3) երեխաներին խնամք տրամադրելու գործունեություն իրականացնելու դեպքում՝ Որոշմամբ սահմանված պահանջներից բացի, տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու համար նախատեսված տարածքում ունի դասապատրաստման և խմբային աշխատանքների համար նախատեսված սենյակներ, երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ և բարեկարգ խաղահրապարակներ և խաղասենյակներ, ինչպես նաև ապահովում է երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները.

4) որպես ժամանակավոր օթևան, կացարանով ապահովելու գործունեություն իրականացնելիս բացառապես երեխաների համար նախատեսված կացարան ունենալու դեպքում՝ Որոշմամբ սահմանված պայմաններից բացի, տվյալ կացարանում ապահովում է երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները:

5) չունի հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություններ.

6) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա չէ հայտատուին սնանկ ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ և հայտատուն չունի չմարված (չներված) պարտավորություններ:

13. Հանձնաժողովի քարտուղարը վարում է հավաստագրերի գրանցամատյան՝ Որոշմամբ հաստատված հավելվածի 52-րդ կետի պահանջներին համապատասխան (ձևը կցվում է):

14. Հանձնաժողովը սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրումն իրականացնում կամ հավաստագրումը մերժում է Որոշմամբ սահմանված ձևին համապատասխան հավաստագրման հայտը և դրան կից ներկայացված բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

15. Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրումը մերժվում է, եթե՝
- 1) հայտը և (կամ) դրան կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենքների և (կամ) իրավական այլ ակտերի պահանջներին.
 - 2) հայտին կից ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր կամ հայտում և (կամ) դրան կից ներկայացված փաստաթղթերում արտացոլված են կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ կամ հայտին կից չեն ներկայացվել Որոշմամբ հաստատված կարգով պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը.
 - 3) հայտատուն ունի հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություն՝ օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով.
 - 4) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա է հայտատուին սնանկ ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ և հայտատուն ունի չմարված (չներված) պարտավորություններ.
 - 5) հայտատուն չի բավարարում տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները.
 - 6) նախարարության հիմնավորված կարծիքով հայտատուի կողմից տվյալ սոցիալական ծառայությունների տրամադրումը կարող է վտանգել սոցիալական ծառայություններ ստացող անձանց առողջությունը, կյանքը կամ զույքը կամ սոցիալական ծառայություններ ստացող անձանց այլ իրավունքները կամ օրինական շահերը.
 - 7) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:
16. Նախարարը, հանձնաժողովի եզրակացության հիման վրա, այն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու, այդ թվում՝ վերապահումով, կամ հավաստագրումը մերժելու մասին անհատական իրավական ակտ, որը հայտատուին է հանձնվում Որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում:
17. Հավաստագիրը հայտատուին հանձնվում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու մասին նախարարի հրամանի ընդունումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Որոշմամբ հաստատված հավելվածի 30-րդ կետով սահմանված կարգով, իսկ Որոշմամբ հաստատված հավելվածի 23-րդ կետով սահմանված՝ վերապահումով հավաստագրման դեպքում, հավաստագիրը տրվում է կազմակերպության կողմից առկա թերությունները վերացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում::
18. Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրի ձևը սահմանված է նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 172-Ն հրամանով: Հավաստագիրը նախարարության կողմից տրվող, սահմանված ձևի և վավերապայմաններով փաստաթուղթ է, որը հավաստում է Որոշմամբ սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու հանգամանքը:

19. Հավաստագիրը վավերացվում է նախարարի ստորագրությամբ և նախարարության՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով:
20. Հանձնաժողովի գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: